

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեց ամսայ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսայ . . . 7 ֆր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տօլար

Վեցամսայ 1. 50 »

ԿԱՆՈՒԿ

Մանուկանս ուղր
20 սանթիմ



ՎԵՐԱԿԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ 2 ԵՖՇՈՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Գրութաշինք եւ չին
տրութիւր

ՀԱՍՏԵ

Rédaction journal

l'avouank

VARNA (Bulgarie)


Редакция

на вѣстникъ

l'avouank

ВАРНА

ԹԻՒՐԻՍՍՅՈՒԹԻՒՆ ՍԸ



Մեր նախորդ թիւին «Պուլկարիս»
ընտանիք Ազգ. կալուածները
խորագրով խմբագրականը թիւ-
րիմացութեանց տեղի է տուեր .
տեղացի ազգայիններէ ոմանք
կարծեր են թէ այն յօդուածը
խտրական ոգիով մը գրուած է .
մինչդեռ մենք երբէք և ոչ մէկ
պարագայի մէջ խտրի չենք գը-
րած տեղացիի ու գաղթականի
միջեւ, ու միշտ այսպէս ենք
խտրական ոգով գաղտնիքը .
Մեր այս անխտրականութեան
հսկայ ապացոյցներէ մին էր զոր
տուինք և որ մոռցուած չկրնար
ըլլալ մեր ընթերցողներէն, Պար-
տիզակցի Սարգիս Գաբրիէլեանի
ընտրելիութեան դէմ տեղացի
Յակոբ Մալեանին պատգամաւո-
րութիւնը յաջողցնելու համար .

Այդ յօդուածով մեր նպատակը
եղած է միայն Պուլկարիսի հայ
եկեղեցիներուն և վարժարաննե-
րուն գոյութիւնը նիւթապէս ա-
պահովող կալուածներ չ'կենալը
մատնանշել և դարձան որոնել .
«Վերջին 8—10 տարուան շրջա-
նին մէջ երեւան ելած կտակնե-
րով և ժրջանի թաղ. խորհուրդ-
ներէ ոմանց գովելի ջանքերուն
չնորհիւ, բաւական ազգային կա-
լուածներ մէջ տեղ գալ սկսան .»
ըսելով, և Շուճլան, Սիւրիտրէն և
Ռուսչուքը օրինակ ցոյց տալով,
մենք ըսել չէինք ուզած թէ այդ
քաղաքներու ազգային կալուած-
ները վերջին գաղթականութեան
չնորհիւ ձեռք բերուած են, երբ
իրողութիւնը ակներեւ է թէ՛
Շուճլայի և Սիւրիտրէի կալուած-
ները բնիկ տեղացի քանի մը
հայ ընտանիքներու կտակներուն
արգիւնքն են. Ռուսչուքիներն ալ
գաղթականութեան վերջին հո-
սանքէն առաջ կառուցուած են .

Միայն սա կէտը չենք դադ-
րիր յիշել թէ Պուլկարիսի հայ
եկեղեցիները բազմաթիւ քաղ-
քառ մնացած են Թուրքիոյ շատ
մը անշուք գաւառներու հայ ե-
կեղեցիներէն, Ասոր դարձանը

պէտք է գտնել, որպէսզի ապա-
հովենք այս օտար երկիրներու
մէջ հաստատուած հայ գաղութ-
ներու գոյութիւնը կանոնաւոր
վարժարաններու շնորհիւ, որոնց
ծախքին կարեւորագոյն մասը
գոցուելու են եկեղեցական կալու-
ածներու հասոյթներովը .

ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

—Պատիւը տւելի կարժէ քան
իրաւունքը .

Ուստի պէտք չէ որ մարդ իր
իրաւունքին տիրանալու համար
գիմէ այն տեսակ միջոցներու ո-
րոնք իր պատուոյն արատ բերե-
լու բնոյթը ունենան .

—Ճշմարտութիւնը կը տփու-
նի երբ ոսկին վրայ կը հասնի .

—Երջանկութիւնը ընկերներէ
տւելի սիրելի է .

—Տխրութեան նման ուրա-
խութիւնն ալ իր արցունքները
ունի .

—Թշուառութիւնը մարդը
կասկածելի կ'ընէ .

—Որոնք որ զարգարանքով
բարձր ըլլալ կը սիրեն նկարա-
դրով ցած են .

—Չափազանց վտառակութիւնը
վտանգ կը հրաւիրէ .

—Այնքան խղճահարութեան
պայքարն է .

—Բարի եղէք, Բարութիւնը
իր մէջ ուրիշ բաներ ալ կը պա-
րունակէ .

—Կրօնքը փոխելու համար
կրօնամիտ ըլլալ պէտք է, (կամ
անմիտ)

—Վշտահար հսկողին գիշերը
երկար կ'երեւայ .

—Կատուն կը խաղայ, մուկը
կ'ողբայ .

—Յաջողութիւնը աշխարհի
լաւագոյն բժիշկն է .

ՔԱՂԱՔԱՎԱՆ

Ինչպէս որ կը կանխատեսուէր
Փրանսայի Հանրապետութեան
Նախագահութիւնը վիճակեցաւ
Մերակոյտի նախագահ Մ. Փալիէ-
ռի, որ շահեցաւ 449 ձայն ընդ-
դէմ 389 ձայնի, որուն 371 ը
շահած էր Մ. Տուրէրը .

Վէռսայի մէջ Ընդհանուր Ժո-
ղովի դուժարութեն օր մը առաջ
հանրապետական երեսփոխաննե-
րու և ծերակուտի անդամներու
համագումար մը տեղի ունեցաւ—
ընկերվարականներն ալ եկած
կցուած էին հանրապետականնե-
րուն—իրենց ընտրելին որոշե-
լու համար, Բաւլըմանի անդամ-
ներէն 649 անձեր հոն հաւաքու-
ած էին, անոնցմէ 416 ը Մ. Փա-
լիէռին և 191 ը Մ. Տուրէրին
տուին իրենց ձայները, Սյդ-
վայրեանէն ալ ևս հասկցուած
էր թէ առաջինը պիտի ըլլայ Մ.
Լուպէի յաջորդը, որով Հանրա-
պետականները կրկին յաղթանա-
կած պիտի ըլլան յետագիւտական
կոչուող կրօնամիտ, ազգամուլ և
միապետական կամ արքայական
կուսակցութեանց, Ասոնց ամէն
ջանքերը պարագայանցան .

Մեծն Բրիտանիոյ վարչութեան
ղեկին ազատականներու յանձնու-
ելուն հետեւանքով, լուծուած
Երեսփոխանաց Խորհրդարանը
վերակազմելու համար, կատարու-
ող ընտրութիւններուն ցարդ-
յայտնուած արդիւնքը ջախջախիչ
պարտութիւն մը կապացուցանէ
պահպանողական քօշիներու կամ
միութեանական կուսակցութեան՝
ի նպաստ ազատականներուն .

Նախկին նախարարապետ Պալ-
ֆուր Մանչէսթըրի մէջ ընտրե-
լի ներկայացած էր բայց կորսն-
ցուց ու չկրցաւ երեսփոխան ընտ-
րուիլ . եթէ ուրիշ տեղ ինք-
զինք ընտրելի ներկայացնելով
չը յաջողի, ստիպուած պիտի ըլ-
լայ քաղաքական ասուարեղէն
քաջուիլ, եթէ Պալֆուր այս կեր-
պով քաջուի, հաւանական է որ

Հօրա Լանստօմը, նախկին արտա-
քին գործոց նախարարը, միութե-
անական կուսակցութեան պետ
ճանչցուի . նախկին գաղթային
նախարար Մ. Լիթէլթըն ևս՝ որ
պահպանողականներու ապագայ
կուսակցապետը ըլլալ կենթա-
դրուէր Հասարակաց Խորհրդա-
րանին մէջ, չը յաջողեցաւ այս
անգամ երեսփոխան ընտրուիլ .
Այսպէս պահպանողական կու-
սակցութիւնը առ այժմ անկումէ
անկում կը գլորի ի նպաստ ա-
զատական դահլիճին, որ կազ-
մուած է ճնշուած ժողովուրդնե-
րու պաշտպան անձնաւորութիւն-
ներէ, ինչպէս, հայասէր Մ. Ճէյմս
Պրայս, Մեծ Մերուսիին, Կլա-
տթոնի, որդին՝ Ճ. Հէրպերթ
Կլատթոն. ձօն Մարլի, Հօրտ Կրէյ
և ուրիշներ .

Սպանիոյ անշան մէկ աւանին մէջ,
Ալքէզիրաս, այսօր գումարուած է մի-
ջազգային դեսպանաժողով մը, հազա-
րաւոր խմբագիրներէ չլքապատուած .
Մարքի Իսլամ պետութեան բաղդը
վճելու համար, Գերմանիոյ պատու-
ւիրակին Մ. Ռոսովիչի առաջարկու-
թեամբ նախագահի աթոռը զբաղեց
Սպանիոյ պատուիրակ Մ. Ալմոսովօյը,
Սա իր բացման ճառին մէջ անմիջա-
պէս յայտարարեց, թէ դեսպանաժող-
ովին առարկայ եղող բարենորոգումնե-
րը պէտք է հիմնուած ըլլան «Առաւ-
թանին (Մարքի) գերիշխանութեան,
իւ երկրին ամբողջական պահպանման
եւ առեւտրական հաւասար դաշինք-
ներու այսինքն ազատ նաւահանգիս-
տի երրեակ սկզբունքներուն վրայ .»
Նոյնպէս սա կէտը մասնաշնչեց թէ «Գես-
պանաժողովը ձեռնհասութիւն չունի
Մարքի վարչական փոփոխութեան հա-
մար կատարելու յատկապէս զձեռն
այլ միայն պաշտօն ունի խորհրդակ-
ցաբար ուսումնասիրելու միջոցներ գործ-
ծաղրութեան այն բարենորոգումներու
որոնց այժմէն կիրառութիւնը խիստ
ստիպողական եւ շատ դժուր ըլլալ կը
թուի» (զէնքերու մագաւանդութեան
արգիւնում, ելեւմտական ազդեցութիւն,
նաւահանգիստներէն օգտակար ընել,
ոստիկանական կազմութիւն) . Թը-
րանսայի պատուիրակը անմիջապէս
հաստատեց եւ ստորագծեց իբր հիմ ա-
ռաջարկուած այդ երեք կետերը . Գեր-
ման պատուիրակը ևս յարեց թէ ար-
դէն այդ Գերմանիոյ տեսակէտն էր

եւ յոյս յայտնեց որ Դեպքանաժողովին աշխատութիւնները՝ որոնց վրայ յառաւ են աշխարհի աշխարհը, առաւ աւարտեցին իր իր տան ։

Շատերու կարծիքը այն է թէ Էն աւելի Մարտի օտարականութեան կազմութեան խնդիրը խզուած առաջ պիտի բերէ . որովհետեւ այն կապակցուած է ժողովրդի անհատական համաձայնած են իրենց մէջ ոստիկանական կազմակերպութիւնը Ծառնասացի սպաներու յանձնելու ։ Գերմանիա այս օրինակ առաջարկի մը չափազանց պիտի հակառակի անշուշտ ։

Մարտի Սուլթանը եւս մերժեց վերջապէս Գերմանիոյ խորհուրդներուն հետեւիլ, եւ յայտարարեց թէ իր երկրին գործերը անօրինելու համար չուզեր ո եւ է պետութեան անհատական խորհուրդը լսել, բացի միջազգային դեպքանաժողովի մը համաձայնութիւններէն ։ Մարտի խորհուրդի Սուլթանը լաւ գիտցաւ Գերմանիոյ պաշտպանութենէն օգտուիլ իր անկախութիւնը պահպանելու համար մինչեւ այն կէտը, ուր այլեւս միջազգային դեպքանաժողովի մը պաշտպանութիւնը իրեն յենակաւ ունեցաւ ։ Ինչու համար զուրկ խորհուրդէն Գերմանիոյ նման չափէ զատ բան մը չձանչցող պետութեան մը ։

ՍԱՍՄՈՒՆ ԶԱՅՈՒԹԵԱՆ ԱՂԵՐՍԱԳԻՐԸ ՊՈՒՆՈՅ ԱՆԳԼԻՍՅ ԴԵՍՊԱՆԻՆ

«Արմենիա» ի Հոկտեմբերի թիւին մէջ կը գտնենք Սամսոնի հայերէն Պոլսոյ Անգլիական դեսպանին ուղղուած հետեւեալ աղերսագիրը .

Նորին Բարձրագոյնութեան
Կ. Պոլսոյ Դեսպանին Մեծն-Բրիտանիոյ

Տէ՛ր ,

Ներկայիւս համարձակութիւնը կուսնենանք ի դիմաց Սամսոնի հայ ժողովուրդեան զիմում ընել յոյս Ձեր Բարձրագոյնութեան եւ պարզել մեր հետեւեալ տրտուներն ու ցաւերը .

Վերջին քանի մը շաբաթեան ընթացքին Սամսոն երկու անգամ հրդեհ պատահեցաւ . ստոյգով առաջինը որպէս թէ հայ խոհարարի մը խանութէն ծագած ըլլայ, թէ եւ այս պարագան տակաւին չէ հաստատուած եւ միւս կողմէ հաստատողներ ալ կան թէ այդ խոհարարին մօտը գտնուած իսլամի մը խանութէն ծագած է . բայց որովհետեւ անգամ մը տեղական թիւրք խուժանը եւ կառավարական պաշտօնէութիւնը խնդիրը հայուն ուղեցին վերադարձի՝ այլեւս ոչ ոք կրցաւ համարձակել վկայելու համար թէ հրդեհին ծագումը ո՛չ թէ հայու, այլ իսլամի մը խանութէն է ։ Մէկը թող լով այս պարագան՝ յորում ամբաստանութիւնը որու շուրջ ալ գտնայ՝ տեղական կառավարութեան պարտականութիւնն էր յանցաւորը գտնել եւ պատմել առաջի եւ կրօնքի խնդիրը գտնելու, պարտք կը զգանք մատնանել թէ ինչ չափազանցութիւն ու անիրաւում գործեց տեղական կառավարութիւնը, մի այսպիսի արարք՝ որուն թուրք կամ հայ անհատի մը գործած ըլլալը բացայայտ է՝ վերագրելով քաղաքական զիտումի մը եւ ամբաստանելով առ այս մի ամբողջ

հասարակութիւն , հայ ժողովուրդը ։ Ընդունելով պահ մը՝ թէ այս արարքին հեղինակը հայ տնտես մը լինի՝ կառավարութեան պարտքն էր պատժել լոկ այդ անհատը եւ թոյլ չի տալ որ իսլամ հասարակութիւնը՝ այս առթիւ՝ ինչամական նախատինքներ ու սպառնալիքներ տեղացիէ մի ամբողջ ժողովուրդի ։ Հրդեհին յաջորդ օրէն ըսկսեալ իսլամներուն մէջ սկսաւ տիրել սոսկալի գրգռում մը գէպի հայ ժողովուրդը, զոր կ'ամբաստանէին նոյն իսկ հեռավորներ տեղացիներ Պոլսոյ թէ «Հայերը մեր տունը տեղը այրեցին եւ մեզ մոխիրի վրայ նստեցուցին եւս» ։ Միւս կողմէ կարգ մը իսլամներ ալ իրենց բնական թաղերէն սպառնալիքներու տարափով ու ինչամական նախատինքներով սկսան հանել հայերը լսելով . «Ձեզի խառնուած չուզինք, դուք դիմումը կըրակ կը ձգէք իսլամ չէնք երբեք մէջ եւս» ։

Մի քանի օր վերջ՝ հայոց թաղին մէջ, յաւկարծ, զիշեր ատեն ծագեցաւ հրդեհ մը, որ ամբողջ հայ թաղը այրելու լստիւնով վտանգը կը սպառնար բայց շնորհիւ տարուած ժողովուրդական ջանքերու, միայն մէկ տուն այրուելով առաջը անտեսեցաւ ։ Այս հրդեհը կանխամատուցութեամբ քանի մը անձանց իսլամներու կողմէ ձգուած ըլլալը եւ նոյն զիշերը ուրիշ քանի մը հայ տուններու վրայ ալ միեւնոյն կարգի թշնամական փորձեր տեղի ունենալը հաստատող բաւական զօրաւոր փաստեր կան, սակայն եւ այնպէս տեղական կառավարութիւնը բնա՛ւ մտիկ չընելով եւ հաւատք չընծայելով հայոց վկայութիւններուն, ո՛չ միայն չուզեց հետապնդել յանցաւորները գտնելու, այլ նոյն իսկ բոլորովին անմեղ մէկ քանի հայեր պատուաւոր անձեր—բանասերկեց ու հարցաքննութեան ենթարկեց մէկ քանի օր ։

Այս հրդեհներէն քիչ վերջը, աւրձաղանք գտաւ հոս՝ Իզմիր քաղաքին մէջ պատահած միջադէպի մը տարածայնութիւնը . հոս ինչ որ տակի սաստկացուց իսլամ մոլեռանդներու հայատնեցութիւնն ու գրգռումը, այնպէս որ բաց է բաց շարքերու . թալլելու խոսքեր ու սպառնալիքներ կը լսուէին իսլամ չարագործներու բերաններէն ։

Իսլամ խուժանին այս միեւնոյն տրամադրութիւնը հետզհետէ սկսած է աճիլ ու ընդլայնիլ՝ բացի Սամսոնէ՝ նաեւ ներքին հայաբնակ գաւառներու մէջ ալ . ըստ որում հիմակուրէն մեծ ահ ու սարսափի մէջ է հայութիւնը եւ ժողովրդական գաղտնի դիմումներ կը ըլլան, որպէսզի օր առաջ, ժամ առաջ մեր այս սպառնալիք կացութիւնը պարզեցաւ առ Ձեր Բարձրագոյնութեան ։

Մասնաւորելով մեր աղերսանքը Սամսոնի հայ բնակչութեան կացութեան դարմանը խնդրելու, չափազանցութիւն չէ երբէք, Բարձրագոյնութեան Տէ՛ր , թէ իրաւամբ երկիւղալի կացութեան մէջ կը գտնուինք այժմ Սամսոնի հայերը գիշեր ու ցօրեկ ։ Մէկ կողմէ կեանքի վտանգը կայ մեր գլխուն վերեւ սպառնական, միւս կողմէ հայ տունները հրդեհելու բազմատեսակ փորձեր կընեն իսլամ չարագործներ . քանիցս հայ տուններու մօտէն, հոս ու հոն գտնուեցան զիւրավառ նիւթեր եւ հրձիգութեան յատուկ իւղոտուած լաթեր, զորոնք գետեղող կտրի մը իսլամ աղաքներ անսանք, որոնք կը փախչին . Այս

բոլոր երեւոյթները եւ հոս ու հոն տաճիկ աղբիւրներէն լսուած զանազան շուրկներ, բաւական են հաստատելու թէ իսլամ խուժանը եւ մասնաւոր «լազ գայրդճի»ներու համարաւոր զսպակարգը կարծիս թէ ուստիաւ են եւ մոլեռանգար սրտածուշ կամ կանուխ այրել բնաջինջ ընել հայ թաղը եւ մասնաւոր ջարդել ու թալլել հայութիւնը, ու այս բանին համար լոկ պատուաւոր մը կը փնտռեն ։

Տեղւոյս մի թէսարքի՝ արդէն իսկ ծանօթ ու համբաւաւոր Եօզղատի մէջ իր հայատնեց արարքներովն ու մոլեռանգութեամբը՝ շատ թուրք կը գրտնաւի եւ հոն է պաշտպանել ժողովուրդին կեանքը, պատուը ու ինչքը իր նախորդին օրով թուրք չարագործներ համարձակութիւն չէին ունենար կամ գտնել իրենց ու գտնել չէին . իսկ հիմա՝ այս կառավարչին օրով՝ աստիճանաբար փոխուեցան թուրք ժողովուրդին ձգտումներն ու ըմբռնումները եւ նոյն իսկ պետական ստորագրաւ պաշտօնականներու թաղերը . Հայ ժողովուրդը ամենին վստահ չէ . թէ Մի թէսարքի պիտի ուզէ կամ պիտի կրնայ տաքքը տանել ու եւ ծանր միջադէպի բաւական է որ թուրք չարագործներ յանդգնութիւնն ունենան երեւան բերել այս կարգի մի գէպը ։

Հայոցս տեղւոյս առաջնորդը, իր պաշտօնին անգիտակ, թոյլ ու անկարող կղեր մը, հետեւ է մտածել իր ժողովուրդին վիճակին եւ գլխի մոլեռներ ընել տեղական հիւպատոններուն կամ կառավարութեան իրերու այս վտանգաւոր դրութեան առաջը անտեսելու համար ։

Հիւպատոնները, որոնցմէ կարեւոր մէկ քանինքը երկար տարիներէ ի վեր կը պաշտօնավարեն հոս՝ առանց անձամբ տեսնելու ընդհանուր կոտորածները յիշեցնող ու եւս արհաւիրք միջադէպ, տեղական թուրք պաշտօնէութեան հետ իրենց մշակած յարաբերութիւններէն զգալիօրէն ազդուած են եւ միջոցաւ տեսակ մը անտարրելութեան մէջ, ըստ որում խորունկ . ուշադրութիւն մը չեն դարձներ թէ ինչ կանգնել կը գտնայ իրենց շուրջը եւ ինչ պարտականութիւններ ունին իրենք իրրեւ քաղաքակրթ ու քրիստոնեայ պետութիւններու ներկայացուցիչներ, իրենց պաշտօնավարած տեղերու քրիստոնեայ հասարակութեանց ու մասնաւորապէս մշտահաւած հայ ցեղին կեանքն ու պատիւը պաշտպանելու տեսակետով ։ Հիւպատոններ ալ կան որոնք հոն են ակնաւկ մը իսկ դարձնել այս կարգի երեւոյթներու եւ ժողովրդական յոգեմտութիւն, եւ որոնք աւելի իրենց կամ իրենց հպատակներուն տնտեսական շահերը կը խորհին քան ուրիշ ոչ մէկ անցուցարձի վրայ ։

Արդէն հայ ժողովուրդին մէջ, ցաւ է ըսել թէ, կը պակսի հեղինակաւոր ու զիբի տէր, խելացի ու զարգացած այնպիսի անձնաւորութիւն մը որ կարենար նշանակելի դիւրմը կատարել ի պահպանութիւն ժողովուրդական իրաւունքներու ։ Այսպիսի անձնաւորութեանց պակասը, սակայն, հայ ժողովուրդին անընդունակութեան արդիւնքն է, այլ զրկաւորաբար բնական հետեւանք այնպիսի թշնամաբնութեւ, ըստ որում տիրող կառավարութեան գլխաւոր պաշտօնէութիւնը անմիջապէս կը վրնասէ, նեղութիւններու կենթարկել,

կիմէ ու եւս հայ իրաւունք մը պաշտպանելու յանդգնի եւ կամ Առաջնորդարանի գործերուն մէջ արդարացի ձայն մը բարձրացնել ուզէ ։ Մէկէ աւելի օրինակներ կրնանք տալ՝ եւ թէ հայի ըլլայ՝ ապացուցանել թէ ինչ է թիւրք կառավարութեան պաշտօնականներուն ընթացքը զէպի հայ ունեւորները եւ զարգացածները, որոնցմէ առաջիններէն մեծաքանակ կաշառքներ կորցնելով եւ վերջիններուն «Դուք յեղափոխականներ էք» ի նման զրպարտութիւններ ընելով, չեն թողուր որ ազգին մէջ իրաւունք ու ճշմարտութիւն պաշտպանելու կարող անհատ մը իսկ գոյութիւն ունենայ ։

Կը թախտ ձեռք, Բարձրագոյնութեան Տէ՛ր, որ բարեհաճիք հայ ժողովուրդին հոս եւ գրեթէ ամեն տեղ ունեցած վրտանգութիւնը ու անձկալի կացութեան վրայ դրովալի ակնարկ մը դարձնել եւ յանուն մարդկութեան ու քրիստոնէութեան գիմել այն ազդու միջոցներուն, որոնց շնորհիւ կեդրոնական կառավարութիւնը ստիպուի անմիջական հրահանգներ տալ Սամսոնի տեղական կառավարութեան, որպէսզի այս վերջինը ստաճք առնէ հայ ժողովուրդին զէմ լարուած թշնամութեան ։

Որով կը մնա՞մք ընդ միշտ երախտապարտ մեծ պետութիւնն իրաւանիոյ եւ առ Ձեր Բարձրագոյնութեան ։

«ՀնՁԱԿ»

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԷՆ

Տ. Մկրտիչ Փոքրեղակեանի Առաջնորդի վերջին թիւի առաջնորդող յօդուածը Սուլթանի ըստպանման փորձի մասին հետեւեալ քննադատութիւնը կընէ .

Սուլթանն սպառնուեցաւ, ինքնադրեց, ինչ արդիւնք մեղի, ինչ սուլթանն ուր կը պակսին ամբողջ նիւսած քաղաքականութեան մը գլխաւորութիւնը ստանձնելու ։ Զարմանալի չէ՞ որ մեր բաղդին ու գլխին հետ խաղաղող այդ պարտները ցարդ չէ հասան ըմբռնելու որ հոն չարիք արմատն անձերէ հոն, ընդհանուր թուրք րէժիմին եւ զայն վարող արտաքին եւ ներքին հզօր ազդակներին մէջն է, որոց լոկ ցոլացումն է սուլթան մը, եւ յետոյ չի՞ն խորհած որ սուլթանի փոփոխութիւնը հայկական հարցը երկար ժամանակի մը համար պիտի քննենք, մեր իշխանութիւններին շարունակութեամբ հանդերձ լստեսելով անգամ անոր սպանութեան հետեւանքով առաջացած ընդհանուր մոլեռանգութեամբ միահամուռ, անգութ ջարդի մը հուանականութիւնը ։

Մակեդոնիոյ հարցը պիտի կարգադրուի, բայց հուանականաբար թուրքիոյ այս նուաստացման վրէժը մենք պիտի տուժնք . քանի որ մեր յիմար ընթացքով, նոյն իսկ Դաշակցական օրկանների խոստովանութեամբ մեր համակիր օտարներ մենք պաղած են ալ, մինչ միւս կողմէ թուրք ամբարձր իր սրբազան իշխանի կեանքին զէմ ցցուող Դաշակցականութեան ետին անմեղ, անղէն, անպատրաստ եւ ցարդ խառնուած, յուսաբեկ հայ ժողովուրդը կը տեսնէ, որու վրայ պիտի կրնայ ինչալ, կէբը յագեցնել, անպատիժ,

անպատեհաւ եւ նոյն իսկ քաջալերուած

Եւ սակայն մեր ազգային կեանքին, մեր փրկութեան կենսական խնդրին հետ խաղաղող եւ վտանգող այս խաղաղութիւններին վերջակէտ մը հարկաւոր է այլ եւս:— անյետաձգելի անհրաժեշտութիւն մը՝ քանի մը մասնաւոր անձանց հաշուով կոտորուող ժողովրդեան պատկերը, անկեղծ եւ անձնուէր համախոս մը ոյժերի քանքերով:

••

«Լուսաբեր» ի մէջ կը կարգանք. Գարբերթին կը հաղորդեն. թէ ամէն օր հարիւրաւոր գեղացի հայեր, ծնածուելով կը բռնադատուն ճամբաները շինելու համար աշխատի: Ասկէ զատ կը խլուին հայ գիւղացիներու հաւաքած ու պէտք եղած քարերը՝ եզներն ու սայլերը: Նահանգի ամբողջ հայութիւնը մեծ նեղութեան մէջ է, եւ երբեմն մահասարսուռ օրեր կանցնէ, որովհետեւ թիւրքերը մեծէն մինչեւ էն պղտիկը զինուած կռիւի պատճառներ կը փնտռեն: Իսկ իրենք՝ հայերը՝ խոհեմութիւն կը համարին քնակաւորաբար ամէն կարելի զիջողութիւն ու զոհողութիւն ընել, ու եւէ զէպքի տեղի չտալու համար: Շատեր կը փախչին նահանգէն դուրս, բայց բռնադատող սոսկայի խոշտանկութեամբ տեսնուած կենսականութիւն: Ամերիկայէն վերադարձող հայերը բոլորը ետ կը զրկուին:

* *

Տ. Մկրտիչ Փորթուգալեան իր Մումենիա յի վերջին թիւին մէջ անհարկած ըլլալով թէ Տ. Մինաս Չէրազ Էլմրաճնի կաթողիկոսական աթոռը կիպրոս փոխադրել առաջարկած ըլլայ, Տիար Չէրազ կը խնդրէ մենէ ծառայանել թէ՛ «ինք երբեք առաջարկած չ'է Էլմրաճնի աթոռը կիպրոս փոխադրել: Այդ առաջարկի հեղինակն է ուսանայ ազգասէր գիւնապէս մը (1):

(1) Տ. Չէրազ մեզ հաղորդած է այդ յարգելի անձնաւորութեան անունը, պայմանաւ որ չը հրատարակենք առայժմ:

ՍՈՒԼԹԱՆԸ ՄՊԱՆՆԵԼՈՒ ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Արտատպուած «ԱՐԵՒԵԼԻ» էն)

[Շար. նախորդ թիւէն]

ԸՆԴ. ԴԱՏԱԽԱՉԻՆ ՃԱՌԸ

Նախ եւ առաջ ձեռք առնուեցան Եւրոպայի մէջ անարշիսթութեամբ ծանօթ Ռիէր Գիյոթ անուն ֆրանսացի խմբագրի կողմէ, հայ խոսվարարական գաղափարներու իրրեւ աջակից, հրատարակուող «Բրո Արմէնիա» լրագրին երկու օրինակները: Աստուք զստ զատ քննուելով ու կարգացուելով հասկցուեցաւ թէ արգարեւ հայ յեղափոխականները 1904 թիւ տարուան Մոֆիայի մէջ գումարուեր են, ու թէ եւ տրուած որոշումը գաղտնի պահուեր է. սակայն տարբերեւ հետեւանք յայտագրի մը պատրաստուած, հրատարակուած ու ցրուած է: Այդ յայտագրին զանազան մասերը թարգմանուելով հասկցուած է անոնց պարունակութիւնը՝ այսինքն

Լ'Առաւելի 1904 յունվար 1ի թիւին մէջ հրատարակած է անոր նամակը, առաջ համաժողովին յայտնելու: Գրած է նաեւ թէ ուրիշ Հայեր ալ առաջարկած են մայր աթոռը Եգիպտոս, Սիւ, Աղթամար, Ի. չիլիսէ, Լիւմ, Տարսն, Եւրոպա, Կալկաթա կամ Կարին փոխադրել, այլ այս առաջարկներէն ոչ մին պաշտպանած է: Օգտակար դատած է իբր յուր հրատարակել, հասկցնելու համար ուս կառավարութեան որ, եմէ չը վերադարձնէ եկեղեցական կալուածները, հայ ժողովուրդը կրնայ Կաթողիկոսական աթոռը Ռուսաստանէն դուրս փոխադրել, ինչ որ ուսական սղեղեղութեան նուազում յառաջ պիտի բերէր Արեւելքի մէջ:

* *

Ռեքլամիսթ Ֆուսուհի յունվար 13 թիւին մէջ Տ. Չէրազի Լ'Առաւելի զադարման մասին հետեւեալ մահազը կը կարգանք.

«Լ'Առաւելի թիւին անհետացումը կ'իմաստէ. Երեւելի բոսֆէսէօր եւ հապարակագիր Տ. Մինաս Չէրազ՝ որ Պոլսին Վեհաժողովին ներկայացող հայ պատուիրակութեան մէջ անդամ էր, տասն եւ ութ տարիներէ ի վեր ինք առաջինը կը հրատարակէր այն շահեկան ամսաթերթը: Նա անով կը պաշտպանէր որչափ ճարտասանութեամբ նայնչափ ալ համեստութեամբ եւ քաղաքագիտական խոհունութեամբ իր դիմադը հայրենակիցներուն դատը: Նա իր մեկուսացման մէջ ալ պիտի վայելէ իւր բոլոր ընթերցողներուն յարգանքը: »

ՌՈՒՍԻԱ

Բեթերագուրի 19 յունվար

Սիպէրիայէն այսօր սեղակի Բեթերագուրի հասնող լուրերը շատ գէշ են: Բանակին բարոյական միճակը ողորակ է, եւ խաղաղութիւն մէջ տեսնուեցաւ թէ 500 սպաներ ժողով ըրին խորհրդակցելու համար թէ, կա-

թէ հայ յեղափոխականները արեւս ամենէն վերջնական ու վճռական գործողութեանց պիտի դիմեն: Այս պարբերութեան յայտնի եղած է որ, Աստուած մի՛ արաւցէ, առիթով ոճրագործութեան կազմակերպ: Վերագրեալ խմբագրին սուրբ մէկ յորուածին մէջ ալ բարեկամ տէրու Կ. Պոլսոյ մեծադարձ գեապաններուն ղէմ ալ սպառնական կարգ մը եպիսկոպի խօսքեր կան: Միանգամայն այդ առթիւ խօսուած է նոյն հայ յեղափոխականներուն վերաբերող եւ Կ. Պոլսի, Բերա ու Իզմիր բնակողներու կողմէ յառաջիկային կատարուելիք ոճրագործական արարքներուն վրայ: Այդ կերպով հաստատուած է թէ նոյն անձն ալ հայ յեղափոխական գաղափարներու պատկանող խոսվարներէն է:

Սիւլիս Ռիչի անուն անձին համար խմբակցեցաւ թէ մէկուկէս տարի առաջ գտնուած է Օսմ. Պանգային գիմացը լուսանկարչներու յառուկ գործիք ծախող խանութը: Գնունութեան կատարուելով հաստատուեցաւ թէ հայ յեղափոխականներէն ուսանող Գարեգին Գարակեղով անուն անձը ժամանակ մը լուսանկարչական գործիքներու վաճառմամբ զբա-

սավարութեան հանդէպ ինչ ընթացք բռնելու են: Բարձրագոյն աստիճանի սպաները ջանացին այդ ժողովը ցրուել, բայց ի զուր. անոնք դուրս առնուեցան եւ վերջնականապէս 500 սպաները որոշեցին կարծիք չը յայտնել մինչեւ որ Բեթերագուրիէն տեղեկութիւններ բաւանան:

Նոյնպէս նահանգներէ գէշ լուրեր կը հասնին: Բոլոնիոյ գրեթէ բոլոր քաղաքները ալիւրէ զուրկ են: Վարչապետի մէջ յեղափոխական սպառնալիքներու պատճառաւ մինչեւ իսկ տարրական դպրոցները գոցուեցան: Կովկասի մէջ բազմաթիւ կռիւներ կ'իմացուին զօրաց եւ յեղափոխականաց մէջ Պաթմաի երկաթուղիի դէմ իրաւ կը կոռնին: Սօչի բոցերու մէջ է եւ Աղտամի մէջ հայոց եւ թաթարներու միջեւ կռիւր 8 ժամ տեւած է:

Երկէ Սմոլնսքի մէջ ոստիկանները խմբական պաշարուած մը 150 անձեր ձերբակալեցին: Երկրագործներու անկարգութիւններ կ'իմացուին Շուվայի, Չէրքասէի, Տիմիթրուքի, Պուլկուլինայի, Գալինայի, Էլուպուկայի, Մոհիլէի, Գաւրիլովի, Մէլիքէի եւ Ռուկովի մէջ հրդեհումներով եւ ըսպանութեամբ: Օսեսայի մէջ նետուած ուռմա մը բազմաթիւ զոհեր տուաւ: Հինգ սպանեալ եւ 10 վիրաւոր կը հաշուին:

Դաւառական այս բոլոր տխուր լուրերուն զիմաց պարտինք հաստատել անգամ մը եւս Մոսկուայի եւ Բեթերագուրի արդի խաղաղութիւնը. հոս կը շարունակեն նախազգուշական լուրջ միջոցներ յունվար 9/22 ի տարեդարձին մասին: Զօրք բնաւ այսչափ բազմաթիւ չէր եղած, պահուողները չեն դադրի փողոցները շրջելէ եւ արուարձաններուն մէջ գործախուժքեր են որ կարգապահութեան կը հսկեն: Այսօր ալ միմիայն լեզուներ բերուեցան Բեթերագուրի եւ լաւուեցան զանազան թաղերու մէջ գտնուած գործողներուն: Կրասնովոյները հրացաններով եւ սուրերով զինեալ են: Խուզարկութիւնք կը շարունակուին գիշերցորդի երէկ բազմալուստեան հաստատութեան մէջ եւ այսօր պատմական փոխադարձա-

ղած է Օսմ. Պանգային ղէմ վարձած նոյն խանութին մէջ, սակայն զինուորական ծառայութեան մէջ անուած ըլլալով, Ռուս գաղցեր է, եւ թէ անոր տեղ խանութը մնացեր է Սիւլիս Ռիչի: Այդ անձը չըրջակայքը գտնուած Աճէմեան անուանով ներկի վաճառականէ մը ներկով լեցուն երեսուն տակտո գներ է: Այդ տակտոներով, որոնք իրենց գրաղած արհեստին հետ բնաւ առնչութիւն չունէին, մտադրէին փոխադրել եւ դուրս հանել այն հողերը որոնք առաջ պիտի գային Օսմ. Պանգային ղէմ կատարելիք ստորերկրայ պեղումներէն: Սակայն յետոյ այդ խանութը ձգելէ, վասնզի քօմիթէն յետաձգած էր այդ որոշումը: Եւ միւս կողմէ ինչոքըրը ոստիկանութեան ուշադրութիւնը հրաւիրած էր:

Բարլ Եւովանովիչի եւ Թրատա Եւովանովիչի գաղով, աստուցմէ Բարլ Եւովանովիչ Կ. Պոլսի ծնած է եւ իրաւաբան բնակող Եւովանովիչի Եւովանովիչի անուն հայ բաշարածի մը որդին է. բուն իսկ անունն է Կարապետ Եւովանովիչ անուն, զոր Բարլ Եւովանովիչի վերածած է. իսկ քօմիթին մէջ «Ալլոտ» ծածկանունով ծանօթ է: Կ. Պո-

կան հաստատութեան մէջ գտնուեցան յայտարարութեանց կապոցներ եւ բազմաթիւ զէնքեր:

Զսպողական միջոցները այն աստիճանի են որ բանէ մը երկեղ չկայ եւ բնաւ կասկած չկայ թէ յունվար 22 ին օրը բոլորովին խաղաղ չանցնի:

Միայն, գործաւորաց կուսակցութիւնը ծանուցած է թէ մեծաձեւերու յիշատակը խաղաղօրէն պիտի տօնէ, եւ թէ իր վերջին պահանջները երբէք կ'անխաւ կառավարութեան ծանօթ չեն կրնար ըլլար:

Այսօր տօնի օրն է, անդեալ տարի կայարը Նէվայի ջուրը կը մկրտէր Զմեռուան պալատին առջեւ երբ թնդանօթի մը հարուածը եկաւ մեղքունել կամ վիրաւորել կայսեր ջուրը գտնուող իր քանի մը սպասարկուները: Այս տարի Զարը Նէվայի ջուրին մկրտութիւնը Զարսթօն—Սէլայի մէջ ըրաւ, թէ եւ գիտը երբեք անկէ չանցնի:

Վ Ր Ի Պ Ա Կ

Մեր նախորդ թիւի 2 լոյ. էջին 4 լոյ. սիւնակին վերի մասին մէջ հետեւեալ նախադասութիւնը սխալ շարադրուած ըլլալով իմաստէ ինկած ըլլալուն համար հարկ դատեցինք հոս ուղղել:

. Երբ յոյն, մակեդոնացի, ալպանացի, թուրք եւ քրիտ հայրենասէրները կը հիմնէին ու կը վարէին ֆրանսերէն թերթեր, որոնցմով իրենց ազգային խնդիրը կը պաշտպանէին, աւօր կրկնաւ Հայաստանի համար, որ Մսիոյ մէջ եւրոպական խաղախրոքութեան դրօշակակիրն էր: Եւ իր քաղաքային կատարել, աւստիաւ չըլլալ ազգային օրկան մը խմբագրելու կարող մարդիկ: Լ'Առաւելին այդ պակասը կը լրացնէր

Ա Ձ Դ

Հայկական ընթերցարանի ամբողջ անդամները կը հրաւիրուին ներկայ ըլլալ, երկուշաբթի, 16 յունվար 1906

Իս գտնուած ատեն ներկարարութեամբ ապրուստ կը ճարէր, սակայն յետոյ, նախկին միջադէպէն ետքը փախչելով, Ամերիկա, Պուլկարիա ու Թիֆլիս երկեւեկած եւ քօմիթէին մասնակցած է:

Թրատա Եւովանովիչ ալ Սամաթիա կը բնակէր ու հովանոցավաճառ էր. քօմիթէին մասնակցած եւ բուն իսկ անունը Արտաշ Խաչիկ Գարտանեան ըլլալով հանդերձ, Թրատա Եւովանովիչի վերածեր է: «Թորգոմ» անունով ծանօթ է: Ատոր մայրը եւ ընտանիքին միւս անդամները հիմա Սամաթիա կը բնակին: Ատոնց երկուքն ալ, եղեռնական արարքէն մինչեւ երկու օր առաջ, Կ. Պոլսոյ մէջ ինքզինքնին ցոյց տուեր են Լիւրա Ռիւսի մարդերը, զրազրները եւ մատակարարները: Եղեռնական արարքէն երկու օր առաջ Կ. Պոլսէն փախեր են: Ատոնց երկուքն ալ հօրերուն եւ մայրերուն տունները ըստ օրինի խուզարկութիւն կատարուելով, անոնց մէկ քանի լուսանկարները ձեռք բերուած են, որով անոնց իսկութեանը եւ զիմագծութեանը վերաբերեալ քննութիւնները գերմանացիները են ու եւ է արարկույսէ: (Շարունակելի)

